

չԳէորգին յայն քաղաքն, կ'ըսէ Ջամըն (էջ 41, 247), սկսանի յայտնել զչարութեան խմորն՝ զոր ունէր յառաջնմէ ծրարեալ ի յինքն, այսինքն զաղանդն Ախթարմայութեան: Քանզի եւ Ախալցխա քաղաքն եւս յիսուն ամաւ յառաջ ապականեցեալ էր նոյն աղանդովն ըստ մեծի մասին: Ուստի եւ չԳէորգն այն այնքան համարձակութիւն գտանէ անդ, մինչեւ զչայոց ազգն եւ զԵկեղեցին դաս քարշէ յատեանն եւ վատաբանէ, զանուն փափին յիշէ յԵկեղեցին եւ զայլս այսպիսիս... Եւ յայտնապէս քարոզէ զԹերականութիւն:»

Սիմեոնի սոյն յայտնի վկայութիւնը կը հաստատէ հետեւեալ քահանայական վկայականը, զոր Գէորգ Եւզոկիացի Եպս. 1764 Յունիս 28ին տուած է յԱխալցխա Աւթանտիլ-Ստեփանոս Աւթանտիլեանին, զանիկայ քահանայ ձեռնադրելով, եւ որ յետոյ (1785) ի Հռոմ Ձեռնադրիչ Արքեպ. Ռուբանեան Գպրանոցի հայ կղերիկոսաց եղած է: Սոյն վկայականէն կ'իմացուի՝ որ Կ.Պոլսոյ Առաքելական Նուիրակն Գեր. Ալասիոս զԳէորգ իբրեւ կաթողիկէ Եպիսկոպոս ճանչցած է, ինչպէս նաեւ Ախալցխայի Քափուչինաց Մեծաւոր Հ. Լէոնարդոս Աթերբացին, որոնք կը հրամայեն իրեն քահանայ ձեռնադրել յիշեալ Գորեցի Աւթանտիլ Աւթանտիլեան հայ կաթողիկէ պատանին: Ակայականիս բնագիրը պահուած է Անտոնեան Միաբանութեան Կ.Պոլսոյ վանաց Գիւանը (Կարգ Ա. Տուփ 40):